



ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

Կենսաբանության ասպարեզում մասնագիտական բառարանների անհրաժեշտությունը դժվար է գերազնահատել, նկատի ունենալով գիտության ներկայիս բուռն զարգացումը, հատկապես ֆիզիկաքիմիական կենսաբանության, մոլեկուլային և բջջային կենսաբանության, գենետիկայի բնագավառներում հետազոտությունների աննախադեպ առաջընթացը և մասնագիտական նոր եզրույթների ի հայտ գալը: Բառարանի նշանակությունը ավելի է կարևորվում, եթե այն եռալեզու է, ծավալուն ու նախատեսված է նաև կենսաբանության հարակից բնագավառների՝ բժշկագիտության և գյուղատնտեսական գիտությունների մասնագետների, թարգմանիչների, ուսուցիչների, ուսանողների, աշակերտների համար: Այդպիսին է ՀՀ ԳԱԱ, Գիտությունն հրատարակչության կողմից դեռևս 2011 թվականին հրատարակված պրոֆեսոր Ա.Ա. Միմոնյանի և դոցենտ Ի.Հ. Բատիկյանի, Անգլերեն-ռուսերեն-հայերեն կենսաբանական բառարանը, որը ներառում է ավելի քան 80 000 եզրույթ:

Նմանատիպ աշխատության իրական գնահատականը ժամանակն է տալիս, երբ բառարանն աննկատ դառնում է անհրաժեշտություն և մշտապես ուղեկցում մասնագետին իր գիտակրթական գործունեության ընթացքում: Սակայն այսօր էլ կարող ենք փաստել, որ բառարանն, իրոք կարևոր երևույթ է մեր կենսաբանական հանրության համար և այն, անշուշտ, կգտնի իր ընթերցողին: Դրա մասին են վկայում արդեն-իսկ առկա դրական արձագանքները, որոնց թվում հատկապես գնահատելի է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկաքիմիական կենսաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաճարտարագիտության և կենսաինֆորմատիկայի ֆակուլտետի դեկան, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Վ.Պ. Սկուլաչովի գրախոսականը, որտեղ մեծանուն գիտնականն իր գոհունակությունն է հայտնում և դրվատանքի խոսքեր ուղղում հեղինակներին (տես՝ “Голос Армении”, №27 20240, 2012):

Գրախոսականում մասնավորապես նշվում է, որ եռալեզու բառարանն իր բովանդակությամբ, կենսաբանական անվանումների և եզրույթների քանակով յուրահատուկ մեծածավալ արժեքավոր աշխատություն է, բարեխիղճ աշխատաքնի արդյունք, որտեղ ի մի է բերվել նյութի հավաքման, մշակման և նրա պատշաճ ներկայացման հեղինակների բազմամյա քրտնաջան աշխատանքը: Դրանում տեղ են գտել բույսերի և կենդանիների և նրանց ենթատեսակների անգլերեն, ռուսերեն և լատիներեն տարբերակներին համարժեք հայերեն եզրույթները: Ակադեմիկոսի կարծիքով, բառարանում առկա ավելի քան 80 000 եզրույթները լայն սպեկտր ունեն, վերաբերում են կենսաբանության տարբեր բնագավառներին և կարող են օգտագործվել գիտական տարաբնույթ հետաքրքրություններ ունեցող մասնագետների կողմից: Նշվում է, որ բառարանն անշուշտ կնպաստի կենսաբանության մեջ միասնական տերմինաբանության կիրառմանը, անգլերեն և ռուսերեն գիտական եզրույթների ճիշտ թարգմանությանը: Ակադեմիկոսը նաև հույս է հայտնում, որ այդ եռալեզու համապարփակ կենսաբանական բառարանից կարող են օգտվել ոչ միայն Հայաստանի, այլ նաև այլ երկրների մասնագետներ:

Հիրավի, արժանի գնահատական այդ արժեքավոր աշխատությանը:

«Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրություն